ԼՂԻՄ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՕՐԵՐԻՆ

Օրեցօր ուժեղանում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի աշխատավորների հետաքրքրությունը ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումարի աշխատանքի նկատմամբ։

Մայիսի 30-ին երեկոյան նիստի հեռուստատեսային հեռարձակման ավարտից հետո Ստեփանակերտի կենտրոնական հրապարակում տեղի ունեցավ միտինգ, որին մի քանի հազար մարդ էր մասնակցում։ Նպատակն էր քննարկել երկրի համաժողովի ընթացքը, կարծիքներ փոխանակել դրա շուրջը, մշակել նոր պատվիրաններ իրենց ընտրյալներին։

Միտինգում ելույթ ունեցողները, ականատես լինելով այն փաստին, որ ԼՂԻՄ-ի դեպուտատական խումբը համաձայնեց և հանդես եկավ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Ազգությունների խորհրդում վերաքվեարկելու համար երեք թեկնածություն առաջադրելու առաջարկությամբ, հավանություն չտվեցին իրենց ընտրյալների դիրքորոշմանը։ Նրանց կարծիքով Ինքնավար Մարզից ընտրված դեպուտատները թույլ են պաշտպանում ղարաբաղյան շարժման շահերը։ Հավաքվածները լրացուցիչ պատվիրաններ ուղարկեցին իրենց դեպուտատներին։ ԼՂԻՄ-ի աշխատավորների իղձերին վերաբերող հիմնախնդրից բացի միտինգի մասնակիցները ուրիշ հարցեր չշոշափեցին։ Նրանք որոշեցին ամեն օր հավաքվել համագումարի աշխատանքի ընթացքի համանման քննարկումների համար։

Կիրովականի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքի դասախոս Հասմիկ Գրիգորյանը զինծառայողներին շնորհակալություն հայտնեց նրանց ցուցաբերած տակտի և միտինգի մասնակիցների նկատմամբ հարգանքի համար։ Համոզմունք հայտնեց, որ զինծառայողների հետ քնակչության հարաբերությունները այսուհետև էլ կլինեն հարգալից, բացառելով կոնֆլիկտների առաջացման ամեն մի հնարավորություն։

Հրապարակում հավաքվածների հետ էին ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեի մի քանի անդամներ։

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի հատուկ թղթ.)

Ստեփանակերտ